**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան 15 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ն 2010թ. հոկտեմբերի 5-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 92-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233-րդ հոդվածը կարգավորում է վճռաբեկ բողոքի վերադարձման հետ կապված իրավահարաբերությունները:

Դիմողի կարծիքով, նշված հոդվածի 3-րդ մասը վճռաբեկ դատարանին հնարավորություն է տալիս ձեւավորել այնպիսի դատական պրակտիկա, համաձայն որի

դիմումները վերադարձվում են առանց քննության: Եվ գործերի ընդունման հարցում դրսեւորվող մոտեցման արդյունքում, ըստ դիմողի, անհնարին է դառնում վճռաբեկ դատարանի իրավասությունների շրջանակներում անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

2. Օրենսգրքի վիճարկվող 233-րդ հոդվածի դրույթները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ, շարադրված էին 231.1-րդ հոդվածում, որի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը: Մասնավորապես, նշված որոշումով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները (ներկա խմբագրությամբ՝ **233-րդ հոդվածի** 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը եւ **3-րդ մասը**) ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող եւ հետագայում փոփոխության չեն ենթարկվել: Հետեւաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

**Նախագահող՝**
**Անդամներ՝**

15 հոկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-32